



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№

§ |

2012

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԽԱՆԻԶՄ)
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N1055-Ն որոշման հավելված N2-ի 47-րդ կետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման հավելված N1 –ի 14-րդ կետի պահանջներով՝

Հրամայում եմ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտության վարչությանը՝

1. Ապահովել <<ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի (մեթոդաբանություն, ցուցանիշներ, հաշվարկի մեխանիզմ)>> նախագծի փորձարկումը՝ համագործակցելով ՀՀ բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունների հետ:

2. Փորձարկումը սկսել 2013 թվականից, արդյունքներն ամփոփել մինչև 2013 դեկտեմբերի 25-ը և <<ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի (սկզբունքներ, մեթոդաբանություն, ցուցանիշներ, հաշվարկի մեխանիզմ, չափանիշներ)>> լրամշակված նախագիծը ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ.Հարությունյանին:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

**ՀՀ քարձրագույն ուսումնական հաստատությունների
ազգային վարկանիշավորման համակարգ
(մեթոդաբանություն, ցուցանիշներ, հաշվարկի
մեխանիզմներ)**

Երևան-2012

Բովանդակություն

Գլուխ 1. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի մշակման նպատակն ու խնդիրները.....3

1.1 Նախաբան.....3

1.2 ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգի նպատակները.....6

1.3 ՀՀ բուհերի վարկանիշավորման ազգային համատեքստը և մոտեցումները.....7

Գլուխ 2. Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման համակարգերի ստեղծման միջազգային փորձը10

2.1 Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման համակարգերի պատմությունը.....10

2.2 Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման համակարգերի միջազգային քննադատությունը.....13

2.3 Բուհերի վարկանիշավորման արդիական համակարգերը և Բեռլինյան սկզբունքները.....15

2.4 Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման փորձը հետսոցիալիստական երկրներում.....19

Գլուխ 3. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների դասակարգումը և վարկանիշավորման ցուցանիշների շարքը.....25

Օգտագործված գրականության ցանկ

Հավելված 1. ՀՀ բուհական և հետբուհական կրթական համակարգի հաստատությունների

դասակարգումը ըստ առաջարկվող կրթական աստիճանների և մասնագիտական ոլորտների թվի

Հավելված 2. ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգի ցուցանիշների ցանկ

Գլուխ 1. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի մշակման նպատակն ու խնդիրները

1.1. Նախաբան

2005 թվականին Բերգենում տեղի ունեցած նախարարական գագաթաժողովում Հայաստանը միացավ Բոլոնիայի գործընթացին և ստանձնեց պատասխանատվություն՝ դառնալ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մասը: Ըստ այդմ, ՀՀ կառավարությունը՝ ի դեմս կրթության և գիտության նախարարության, ծավալեց բարձրագույն և հետբուհական կրթության համալիր բարեփոխումներ՝ Բոլոնիայի հոչակագրի սկզբունքներին համապատասխան: Բարեփոխումների օրենսդրական հիմք կազմեց «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Բարձրագույն և հետբուհական կրթության բարեփոխումները ներառում են բարձրագույն կրթության կառուցվածքը, բովանդակությունը և կառավարումը: Ըստ այդմ, բարեփոխումների նպատակն է բարձրացնել ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության որակը և արդյունավետությունը՝ ապահովելով վերջինիս համադրելիությունը և մրցունակությունը միջազգային կրթական ասպարեզում: Մասնավորապես, ՀՀ բարձրագույն կրթության համակարգի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման տեսանկյունից, հետևյալ իրականացված գործողությունները կարող են համարվել առանցքային:

1. 2004 թվականին ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացվեց Լիսաբոնի որակավորումների ճանաչման կոնվենցիան՝ իրավական հիմք հանդիսանալով 2005 թվականին «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» (ԱՓՇԱՏԿ) հիմնադրամի (<http://www.armenic.am/>) ստեղծման համար:
2. 2005 թվականից սկսվեց բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրումը (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա)՝ համակարգային մակարդակով:
3. 2007 թվականից բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվեց կիրառվել ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը(ECTS):
4. 2006 թվականին ԱՓՇԱՏԿ հիմնադրամը դառնալով միջազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի (ENIC-NARIC ակադեմիական և մասնագիտական որակավորումների փոխճանաչման գրասենյակների միջազգային ցանց) լիիրավ անդամ և սկսեց օտարերկրյա որակավորումների գնահատման և ճանաչման գործառույթների իրականացումը՝ Լիսաբոնի կոնվենցիայի և միջպետական համաձայնագրերի դրույթների համաձայն:
5. 2007 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվեց դիպլոմի միասնական ներդիրը և սկսվեց դրա սրամադրումը բուհերի կողմից:

6. 2008 թվականին ՀՀ կառավարության կողմից հիմնադրվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (<http://www.anqa.am>), իսկ 2011 թվականին հաստատվեցին «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» և «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը»՝ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին համապատասխան:
7. 2010 թվականին ներդրվեց հետազոտողի կրթական աստիճանը:
8. 2011 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվեց Որակավորումների ազգային շրջանակը՝ Եվրոպական որակավորումների շրջանակին (EQF) համապատասխան, որը բաղկացած է որակավորումների ութ մակարդակներից:
9. 2011 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվեց բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր ռազմավարությունը:
10. 2011 թվականին մեկնարկեց բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձնական հավատարմագրման գործընթացը՝ համաձայն Եվրոպական ընթացակարգերի:

Այս քայլերը ապացուցում են ՀՀ կառավարության շարունակական պատրաստակամությունը՝ ՀՀ բարձրագույն կրթական համակարգը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ) ինտեգրելու հարցում, ինչպես նաև բնութագրում են այն իրական առաջընթացը, որ գրանցվել է այս ուղղությամբ:

Բարձրագույն կրթության բարեփոխումների կարևորագույն խթան է նաև այն, որ Հայաստանը ընտրվել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հաջորդ նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկիր: Գագաթաժողովը տեղի կունենա 2015-ին Երևանում: Համաձայն Բոլոնիայի գործընթացի սկզբունքների, դառնալով ԵԲԿՏ երկրների նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկիր՝ Հայաստանը ստանձնել է նաև Բոլոնիայի քարտուղարությունը 2012 թվականի հուլիսի 1-ից մինչև 2015 թվականի հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում: Այս նախարարական գագաթաժողովի առանցքային խնդիրներից մեկն է լինելու 2012 թվականի ապրիլին Բոլոնիայում կայացած նախարարական գագաթաժողովում սահմանված առաջնահերթությունների ուղղությամբ զարգացումների արձանագրումը:

2009 թվականից Բոլոնիայի գործընթացը թևակոխել է նոր տասնամյա փուլ (Բոլոնիա 2020): 2009 թվականին Լյուվենում, ինչպես նաև 2010 թվականին Բուդապեշտում և Վիեննայում տեղի ունեցան Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների կրթության նախարարների գագաթաժողովները, ընդունեցին նոր փաստաթղթեր, այդ թվում Լյուվենի հռչակագիրը՝ «Բոլոնիայի գործընթացը-2020, Եվրոպայի բարձրագույն կրթությունը նոր տասնամյակում»:

Նոր տասնամյա փուլում բարեփոխումների ուղղություններն են.

1. Սոցիալական ուղղվածություն
2. Շարժունություն
3. Շարունակական կրթություն
4. Զբաղվածունակություն
5. Որակավորումների շրջանակներ
6. Միջազգայնացում
7. Կրթություն, գիտական հետազոտություն և նորարարություն
8. Ֆինանսավորում
9. Որակի ապահովում
10. Փոխճանաչում
11. Թափանցիկության գործիքներ
12. Ուսանողակենտրոն ուսուցում

Բոլոնյան գործընթացի նոր տասնամյա ծրագրի ուղղություններից է թափանցիկության բազմաչափ գործիքների ներդրումը, իսկ Բուխարեստում հռչակված առաջնահերթ խնդիրներից մեկը՝ ««Քաղաքականության նպատակների իրագործման նպատակով տվյալների հավաքագրման արդյունավետության և թափանցիկության բարձրացումն է»¹: Մյս նոր քաղաքականությունը մասնավորապես նշանակում է, որ Բոլոնյան գործընթացով պայմանավորված բարեփոխումների արդյունքների գնահատման և Եվրոպական բարձրագույն կրթական համակարգի մարտահրավերներին հասցեական արձագանքելու նպատակով, երկրները պետք է մշակեն իրենց բարձրագույն կրթական ոլորտների ընթացիկ մշտադիտարկման համակարգեր: Ինչպես նշված է Բուխարեստի հռչակագրում. «Մենք

կայաքարենք կրթական համակարգը հանրության, և հատկապես ուսանողների և գործատուների համար ավելի դյուրըմբռնելի դարձնելու համար: Մենք կաջակցենք գործող և նոր մշակվող թափանցիկության գործիքների բարելավմանը՝ դարձնելով դրանք առավել նպատակաուղղված շահառուների կարիքներին և էմպիրիկ մակարդակում ավելի հիմնավորված: Մենք նպատակ ենք դնում մինչև 2015 թվականը մշակել թափանցիկության միասնական ուղենիշներ>>:

Թափանցիկության ապահովման կարևորագույն գործիքներից է բուհերի վարկանիշավորումը, որը համադրելի և բաց տեղեկատվություն է տրամադրում տարբեր երկրների բարձրագույն կրթական համակարգերի վերաբերյալ:

Բացի Բոլոնիայի գործընթացի նոր տասնամյա ծրագրի գործողություններից, ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգի մշակումը ներառված է նաև ՀՀ կառավարության 2012 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ցանկում:

1.2. ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգի նպատակները

ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգի նպատակներն են.

- բարձրացնել բուհերի միջև մրցակցությունը և դրանց հաշվետվողականությունը;
- ընդլայնել բուհական համակարգի շահառուների՝ ուսանողների, դիմորդների, գործատուների և այլ սոցիալական խմբերի, բուհերի մասին բաց և թափանցիկ տեղեկատվություն ստանալու հնարավորությունները և բարձրացնել հասարակության իրազեկվածությունը կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ;
- բարձրացնել բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության մշակման և որոշումների ընդունման արդյունավետությունը՝ նպաստելով բարձրագույն կրթության որակի բարձրացմանը:

1.3. ՀՀ բուհերի վարկանիշավորման ազգային համատեքստը և մոտեցումները

¹[http://www.ehea.info/Uploads/\(1\)/Bucharest%20Communique%202012\(2\).pdf](http://www.ehea.info/Uploads/(1)/Bucharest%20Communique%202012(2).pdf)

ՀՀ բուհերի վարկանիշավորման ազգային համակարգը մեթոդաբանական առումով հիմնվում է բարձրագույն կրթական հաստատությունների վարկանիշավորման բեռլինյան սկզբունքների վրա, որոնք մանրամասն ներկայացված են հաջորդ բաժնում:

ՀՀ բուհական համակարգի ազգային վարկանիշավորման համակարգի մշակման ընթացքում հաշվի են առնվել վերջինիս հետևյալ առանձնահատկությունները.

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգը ներկայումս գտնվում է բարեփոխումների փուլում, որը կարելի է բնորոշել իբրև անցումային փուլ բուհական համակարգի համար: Ակնհայտ է, որ բուհերի վարկանիշավորումը հնարավորություն կընձեռի բացահայտել բուհերի վիճակը ներկա անցումային փուլում, բայց այն ունի նաև հեռահար ուղղվածություն՝ նպաստել բուհերի զարգացմանը: Առաջարկվող վարկանիշավորման մեթոդաբանությունը ճկուն է և այն հնարավոր կլինի կիրառել բարեփոխումների արդյունքում փոփոխված բուհական համակարգի նկատմամբ:
2. ՀՀ «Կրթության մասին» օրենքը սահմանում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տիպերը՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա: Սակայն այս դասակարգումը հիմնականում չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված սահմանումներին: Ըստ «դասական» սահմանման համալսարան է կոչվում այն բարձրագույն ուսումնական հաստատությունը, որն իրականացնում է կրթական և գիտահետազոտական գործունեություն բազմաթիվ մասնագիտական ոլորտներում և շնորհում է ինչպես տարբեր կրթական, այնպես էլ գիտական աստիճաններ (բակալավր, մագիստրոս, գիտությունների դոկտոր): Այսպիսով, ընդունված է, որ համալսարան պետք է կոչվի այն բուհը, որն իրականացնում է ոչ միայն կրթական, այլ նաև գիտահետազոտական գործունեություն, ընդ որում, ունենալով կարևոր սոցիալական դերակատարում հասարակության մեջ: ՀՀ-ում համալսարան եզրույթը հաճախ օգտագործվում է հիմնականում մեկ ոլորտում բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների համար, օրինակ՝ բժշկական, լեզվաբանական, մանկավարժական, ագրարային և այլն: Բացի այդ համալսարան են անվանվում նաև այն բուհերը, որոնք իրականացնում են միայն կրթական գործունեություն՝ չկատարելով գիտահետազոտական աշխատանքներ: Ուստի նախքան վարկանիշավորումը անհրաժեշտություն է առաջանում դասակարգել ՀՀ բուհերը՝ որոշակի չափանիշներով: Բուհերի դասակարգումը հնարավոր կդարձնի խմբավորել բուհերը՝ ըստ այդ նախապես

սահմանված չափանիշների: Վարկանիշավորումն այնուհետ անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր խմբի ներսում, որպեսզի հաշվի առնվի բուհերի բազմազանությունը՝ կախված իրենց առաքելությունից, նպատակներից, մասնագիտական ուղղվածությունից, առաջարկվող կրթական ծրագրերից և այլ առանձնահատկություններից: Բացի այդ, դասակարգված խմբի ներսում բուհերի վարկանիշավորումը կապահովի դրանց արդար համադրումը: Բուհերի առաջարկվող դասակարգումը տրված է Գլուխ 3-ում:

3. ՀՀ-ում բուհերի տարածքային բաշխումն անհամաչափ է: Բուհերի մեծամասնությունը գտնվում է Երևան քաղաքում: Մարզերում գտնվող բուհերը իրենց կարողություններով զիջում են Երևանյան բուհերին: Մինևույն ժամանակ կան տարածաշրջաններ, որտեղ բուհեր չեն գործում: Ուստի արդար վարկանիշավորման համակարգը պետք է հաշվի առնի նաև այս առանձնահատկությունը:
4. Հայաստանի բուհական համակարգի դեպքում վերապահումներով կարելի է կիրառել նաև համալսարանական քաղաքների կամ «կամպուսների» գաղափարը, քանի որ բուհերի մեծամասնությունը տեղակայված է բնակավայրերի բանուկ հատվածներում: Հանրակացարանների և այլ համալսարանական կառույցների առկայությունը ավելի շուտ խորհրդային ժառանգություն է, որը չի վերաիմաստավորվել միջազգայնորեն ընդունված բուհական համակարգի տրամաբանության մեջ:
5. Տարբեր երկրների վարկանիշավորման համակարգերում լայն կիրառություն ունեցող փորձագիտական հարցումները կարող են սահմանափակ կիրառություն ունենալ Հայաստանի դեպքում, քանի որ անկախ և անկողմնակալ փորձագետների ինստիտուտը բարձրագույն կրթության համակարգում կայացած չէ:
6. ՀՀ բուհական համակարգում որոշ մասնագիտական ոլորտներում բարձրագույն կրթությունն իրականացվում է բացառապես մեկ, իսկ երբեմն երկու-երեք բուհերի կողմից, ինչն այս ուսումնական հաստատությունները դարձնում է «մենաշնորհային» դիրք ունեցող և հնարավորություն չի ընձեռում համադրել այլ բուհերի հետ:
7. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում նախատեսվում է Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործարկումն ու գործառնությունը, որը հնարավոր կդարձնի ստանալ պարբերաբար թարմացվող բազմաբնույթ տեղեկատվության ՀՀ բուհերի վերաբերյալ և կարող է հիմք ծառայել վարկանիշավորման համար անհրաժեշտ տեղեկությունների ստացման տեսանկյունից:

8. Աշխարհի տարբեր երկրներում վարկանիշավորման արդյունքներն օգտագործվում են մարդկանց կողմից բուհի ընտրության հարցում: Ուստի բարձր գնահատականի են արժանանում են այն երկրների վարկանիշավորման համակարգերը, որոնք հնարավորություն են ընձեռում բուհերը աստիճանակարգել ըստ առանձին վերցված չափանիշների: ՀՀ-ում ազգային վարկանիշավորման համակարգը ևս պետք է ընձեռի այս հնարավորությունը՝ հաշվի առնելով <<դասական>> համալսարանների սակավաթիվությունը:

Գլուխ 2. Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման համակարգերի ստեղծման միջազգային փորձը

2.1. Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման համակարգերի պատմությունը

Ժամանակակից աշխարհում կրթության սրընթաց աճող դերի մասին դատողությունները դարձել են արքիոմատիկ: Գիտելիքահեն տնտեսությունը, բարձրագույն կրթությամբ աշխատուժի պահանջարկի հաստատուն աճը և կրթության միջազգայնացումը արդիականության միտումներից ընդամենը մի քանիսն են, որոնք վեր են հանում մասնագիտական կրթության համակարգի կարևորությունը: Սակայն այս գործընթացները նաև նոր մարտահրավերներ են ստեղծում բարձրագույն կրթության համակարգի հետագա զարգացման տեսանկյունից: Այդ մարտահրավերներից է տարատեսակ կրթական հաստատությունների մեջ կողմնորոշվելու և

ընտրություն կատարելու խնդիրը, ինչը կանգնած է բազմաթիվ դիմորդների և ուսանողների, իսկ շարունակական կրթության և ցկյանս ուսումնառության տեսանկյունից՝ յուրաքանչյուր անձի առջև:

Բուհերի բազմազանության մեջ կողմնորոշվելու գործուն միջոցներից մեկն արդեն տևական ժամանակ մնում է դրանց վարկանիշավորումը և աստիճանակարգումը: Այս համակարգերը, բացի առանձին անհատներին որոշում կայացնելու համար տեղեկատվություն տրամադրելուց, նաև բուհերի կառավարման արդյունավետության և գործունեության թափանցիկության բարձրացման խնդիր են լուծում: Բուհերի վարկանիշավորումը հանդիսանում է ԵԲԿՏ կարևոր ուղղություններից մեկը, որի շրջանակներում նախատեսվում է ներդնել միասնական վարկանիշավորման համակարգ՝ U-Multirank: Այն թույլ կտա միասնական կրթական դաշտում և համադրելի հարթության մեջ դիտարկել ամենատարբեր ուսումնական հաստատությունները տարբեր երկրներից:

Բարձրագույն կրթական հաստատությունների վարկանիշավորման պատմությունը սկսվում է 1925 թվականից, երբ ամերիկյան պրոֆեսոր Ռայմոնդ Հյուգսը վարկանիշավորեց ԱՄՆ համալսարանների բակալավրական ծրագրերը՝ դրանց հեղինակության հաշվարկման մեթոդով: Հյուգսի նախաձեռնությունից միայն 60 տարի անց բուհերի վարկանիշավորման գործընթացը ԱՄՆ-ում նոր թափ հավաքեց և սկսեց տարածվել մյուս մայրցամաքներում և երկրներում:

Պատմականորեն վարկանիշավորման համակարգերի ստեղծման հիմքում ընկած էր այն դրույթը, որ դրանք հնարավորություն կընձեռեն չափել բուհերի արդյունավետությունը: Տիրապետող կարծիքն այն էր, որ բարձր վարկանիշ ունեցող համալսարաններն ավելի արդյունավետ են, ապահովում են ավելի բարձրորակ ուսուցում և գիտահետազոտական պրակտիկա, ինչպես նաև ավելի մեծ օգուտ են տալիս հասարակությանը՝ մատուցվող կրթական ծառայությունների տեսանկյունից, քան ավելի ցածր վարկանիշ ունեցող հաստատությունները: Սակայն, վերլուծաբանների կողմից հաճախակի նշվում էր, որ բուհերի երեք հիմնական գործառույթները՝ ուսուցումը, գիտական հետազոտությունը և հասարակությանը մատուցվող կրթական ծառայությունները, կարող են էապես տարբերվել իրենց որակով և նույնիսկ խոչընդոտել մեկը մյուսին: Այսպես, որևէ ուղղությամբ լավ արդյունքներ գրանցող հաստատությունը կարող է ցածր ցուցանիշներ ունենալ մեկ այլ ուղղությամբ: Օրինակ, ուսանողների ուսուցման տեսանկյունից բարձր որակ ապահովող համալսարանը կարող է չիրականացնել առաջադեմ գիտահետազոտական աշխատանքներ: Ուստի, տարբեր հեղինակների (Ասթին, Քեյվ, Բորդեն, Բորթրիլ) կողմից առաջարկվեց, որ արդյունավետության չափման համար դիտարկվի, թե ինչպես են

բուհերը ներդրումները վերածում կրթական և գիտական արդյունքների: Ըստ այդմ որևէ բուհի հաջողությունը կարող է չափվել երեք բաղադրիչների համադրությամբ՝ ներդրումների, ընթացիկ գործունեության և արդյունքների: Ներկայիս ճանաչված վարկանիշավորման համակարգերը միտված են դիտարկել այս երեք բաղադրիչները միաժամանակ: Օրինակ, US News վարկանիշավորման համակարգը դիտարկում է ներդրումային և արդյունքային ցուցանիշները: Այս տեսանկյունից շրջանառության մեջ դրվեց նաև հարաբերական արդյունավետության գաղափարը (Ժենգ, Ստյուարտ), ըստ որի ներդրումային և արդյունքային ցուցանիշների դիտարկումը հանգեցնում է ոչ թե հաստատության բացարձակ արդյունավետության չափմանը, այլ հարաբերական, այսինքն՝ ներդրումների և արդյունքների հարաբերության չափմանը:

Վարկանիշավորման համակարգերի զարգացման պատմության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև կրթության որակի չափման խնդիրը: Քանի որ կրթական արդյունքների չափումը բազմագործոն բնագավառ է, ուստի և՛ խնդրահարույց, ապա գործող քանակական ցուցանիշների միջոցով կրթության որակի ներկայացումը իրապես բարդ խնդիր էր ոլորտի մասնագետների համար: Հաստատությունները հակված էին (ներկայումս ևս) ուսուցման որակը չափել ուսանողների կողմից կրթական ծրագրերի և դասընթացների գնահատումների միջոցով, իսկ ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքների որակը՝ գիտական հրապարակումների և հղումների թվի հաշվարկի կամ էլ արտաքին աղբյուրներից ստացված ֆինանսավորման չափերի հաշվարկի միջոցով: Ակնհայտ էր, որ այս հաշվարկները որակի մասին ամբողջական պատկերացում չէին տալիս: Ուստի, որոշ վարկանիշավորման համակարգերում ուսուցման որակի չափման համար ներդրվեցին նաև շուկայի ուսումնասիրության մեխանիզմներ: Մասնավորապես, նման մեխանիզմ է տվյալ հաստատության տվյալ մասնագիտության շրջանավարտներից գործատուների բավարարվածության գնահատումը:

Այնուամենայնիվ, հեղինակավոր վարկանիշավորման համակարգերում բուհի գիտահետազոտական բաղադրիչը շարունակում է խաղալ կարևոր դեր և ունի ավելի մեծ կշիռ, քան թե ուսուցման բաղադրիչը: Դրանցում ամենաշատ օգտագործվող ցուցանիշները հիմնված են գիտական հրապարակումների և հղումների թվի հետ, չնայած այն հանգամանքին, որ դրանց օգտագործումը միանշանակ չի ընդունվում և բավականին մեծ քննարկումներ են ընթանում դրանց նպատակահարմարության շուրջ:

Ամփոփելով վարկանիշավորման շուրջ տարիներ շարունակ ընթացող մասնագիտական քննարկումները, կարելի է նշել երեք հիմնական նկատառումներ, որոնք պարտադիր

նախապայմաններ են վարկանիշավորման համակարգի հուսալիության և վստահելիության աստիճանի որոշման համար: Դրանք են.

1. Հաստատությունների չափը, ինչն անտեսելու դեպքում մեծ հաստատությունները ինքնաբերաբար առավելություն են ստանում փոքրերի նկատմամբ: Այս նկատառումը հաշվի է առնվում գործող վարկանիշավորման համակարգերից շատ քչերում: Բացառություն է կազմում Շանհայի համալսարանի համակարգը, որում ֆակուլտետի չափը ինքնին ցուցանիշ է:
2. Դիսցիպլինար (մասնագիտական ուղղվածության) տարբերությունները, որոնք կարող են էապես ազդել հաստատության որակի և արդյունավետության չափման մեթոդների և ձևերի վրա, քանի որ ակնհայտորեն, բնական գիտություններում և բժշկությունում գիտական հրապարակումների վրա հղումների համակարգը շատ ավելի զարգացած է, քան հումանիտար գիտություններում, որտեղ բիբլիոմետրիկ չափումները շատ ավելի թույլ են:
3. Ցուցանիշների կշիռների որոշման խնդիրը, քանի որ որոշ ցուցանիշներ ստանում են ավելի բարձր կշիռ, մյուսներն՝ ավելի ցածր, ինչը կարող է էապես ազդել հաստատության վարկանիշի վերջնական հաշվարկի վրա: Կշիռների որոշումը կապված է սուբյեկտիվության գործոնի հավասարակշռման անհրաժեշտության հետ, ինչի լուծումն այս պահին միանշանակ տրված չէ գործող վարկանիշավորման համակարգերում:

2.2. Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման համակարգերի միջազգային քննադատությունը

Բուհերի տարբեր վարկանիշավորման համակարգերը մշտապես գտնվում են շահառուների ուշադրության կենտրոնում և ուսումնասիրվում մասնագետների կողմից: Այդ համակարգերի զարգացմանը զուգընթաց ընթանում է դրանց վերլուծությունն ու հաճախակի քննադատությունը: Ընդ որում, այդ քննադատությունը հավասարակշռող դեր է կատարում՝ կանխելով այս համակարգերի վրա կենտրոնանալուց կամ չափից դուրս տարվելուց և խթանելով դրանց անընդհատ զարգացումն ու պարբերական լրամշակումները: Վարկանիշավորման համակարգերի քննադատությունը հիմնականում հնչում է երկու շահառու խմբերից.

- Ուսանողների կամ ուսումնական հաստատությունների կողմից,
- Գիտնականների համայնքի կողմից:

Առաջին խմբի քննադատության շարքում կարելի է հատուկ առանձնացնել Եվրոպական ուսանողների միության(ESU) կողմից ընդունված հռչակագիրը, որում նշված է.

- Բոլոնիայի գործընթացը պետք է շարունակի կենտրոնանալ բուհերի որակի ապահովման և ոչ թե վարկանիշավորման վրա: Որակի ապահովումը հնարավորություն է տալիս ճշմարիտ տեղեկատվություն փոխանցել ուսանողներին, այնինչ վարկանիշները միայն խորացնում են բնեռացումը արևելքի և արևմուտքի, հյուսիսի և հարավի միջև, մեծացնում են անհավասարությունները: Հանրային/պետական միջոցները չպետք է ուղղորդվեն վարկանիշավորման համակարգերի ֆինանսավորմանը:
- Ուսանողները մերժում են բուհերի վարկանիշներն ու աստիճանակարգումները: Ըստ այդմ, ուսանողները պայքարում են հորիզոնական առումով դիվերսիֆիկացված բուհական համակարգի համար:
- Ուսանողները ընդդիմանում են բուհերի շուկայականացմանը՝ համարելով վարկանիշավորումը բարձրագույն կրթության աճող շուկայականացման գործոն: Ուսանողները իրենց դիտում են որպես ակադեմիական հանրույթի մաս, որ ներառված է ուսումնական գործընթացում, այլ ոչ թե սպառողներ:
- Վարկանիշները սպառնալիք են սոցիալական ուղղվածության տեսանկյունից:
- Պարզունակ և քանակական ցուցանիշների օգտագործումը չի արտահայտում բուհի մատուցած կրթության որակը: Ուսանողները ցանկանում են ներդրում կատարել բուհերի իրական նպատակների, այլ ոչ թե նրանց հեղինակության մեջ:
- Ուսանողները պահանջում են հուսալի և արժանահավատ տեղեկատվություն իրենց ընտրության իրականացման համար:

Ինչպես տեսնում ենք, այս և նման այլ քննադատությունները ուղղված են բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության քննադատությանը՝ շեշտադրելով այդ քաղաքականության օրակարգում վարկանիշավորման համակարգերի ուռճեցված դերը: Վարկանիշավորման համակարգերի առողջ քննադատություններն ընդգծում են նաև դրանց բացասական ազդեցությունը բուհի կողմից որակյալ կրթություն ապահովելու հիմնարար նպատակի իրականացման և շահառուներին ճշմարիտ տեղեկատվություն տրամադրելու գործընթացի վրա:

Միաժամանակ, գիտական հանրույթի կողմից քննադատությունը մատնացույց է անում այն մեթոդաբանական բացերը, որոնք առկա են գործող վարկանիշավորման համակարգերում:

Գիտական հանրության կողմից քննադատությունը կարելի է ամփոփել հետևյալ հիմնական կետերով.

- Մեթոդաբանական խնդիրներ

- *Ցուցանիշների ընտրության և դրանց հուսալիության խնդիրը.* Վարկանիշավորման համակարգերը հիմնված են ոչ թե մեկ առանձին ցուցանիշի, այլ դրանց ամբողջության վրա: Այլ կերպ ասած, վարկանիշը իրենից ներկայացնում է ցուցիչ (ինդեքս), որը պետք է հենվի որևէ տեսական հայեցակարգի և գիտական մեթոդաբանության վրա: Մինչդեռ ակնհայտ է, որ ցուցանիշների ընտրությունն ու ինդեքսի ստացումը հաճախ որոշակի տեսական և մեթոդաբանական հիմք չունի: Այն իրավիճակային է և ամրագրում է իրերի գոյություն ունեցող վիճակը:
- *Արժանահավատ և հավաստի տվյալների բացակայության խնդիրը.* Շատ են դեպքերը, երբ վարկանիշի կառուցման համար անհրաժեշտ տեղեկատվությունը բացակայում է կամ հասանելի ու հավաստի չէ:
- *Ցուցանիշների կշռման խնդիրը.* Այս խնդիրը վերաբերում է նրան, թե որ ցուցանիշը ինչպիսի կշիռ պետք է ստանա վերջնական միավորի/ինդեքսի հաշվարկման ժամանակ:
- *Վստահելիության և կայունության խնդիրը.* Հաճախ վարկանիշավորման համակարգերում միևնույն հաստատության վարկանիշը զգալի փոփոխություններ է կրում տարեցտարի, մինչդեռ ակնհայտ է, որ կրթական հաստատություններում նման արագընթաց փոփոխությունները անհնար են:
- *Հաշվարկի փոփոխությունների խնդիրը.* Ցուցանիշների և/կամ դրանց կշիռների փոփոխությունը կարող է էականորեն ազդել ընդհանուր աստիճանակարգման վրա:
- *Քաղաքական և մշակութային համատեքստը.* Վարկանիշավորում իրականացնելիս պետք է հաշվի առնել երկրում քաղաքական իրավիճակը և մշակութային միջավայրը:
- *Բարձրագույն կրթության համակարգի զարգացման վրա վարկանիշավորման ազդեցության խնդիրը.* Վարկանիշավորման համակարգը պետք խթանի բուհական համակարգի զարգացումը:

Ակնհայտ է, որ առկա քննադատության մեծ պաշարը պետք է մանրամասն վերլուծվի և ստանա հասցեական պատասխան՝ վարկանիշավորման համակարգերի բարեփոխման և հուսալիության բարձրացման տեսանկյունից: ՀՀ ազգային վարկանիշավորման համակարգի ներդրման համար կարևոր է առկա միջազգային քննադատության ուսումնասիրությունը՝ հայտնի թերություններից հնարավորինս խուսափելու և արժանահավատ համակարգի մշակման տեսանկյունից:

2.3. Բուհերի վարկանիշավորման արդիական համակարգերը և Բեռլինյան սկզբունքները

Ներկայումս աշխարհում գործում են ավելի քան 30 բուհերի վարկանիշավորման համակարգեր, որոնցից առավել ճանաչվածներն են.

- Շանհայի Ջիաո Թոնգ համալսարանի «Աշխարհի համալսարանների ակադեմիական վարկանիշավորման» համակարգը (Academic Ranking of World Universities- <http://www.arwu.org/>),
- Միացյալ Թագավորության «Թայմս» թերթի Բարձրագույն կրթության հավելվածը՝ Աշխարհի համալսարանների վարկանիշավորման համակարգը (The Times Higher Education World University Rankings - <http://www.timeshighereducation.co.uk/world-university-rankings>,
- Լեյդենի համալսարանի վարկանիշավորման համակարգը (Leiden Ranking - <http://www.leidenranking.com>)
- Թայվանի բարձրագույն կրթության և հավատարմագրման խորհրդի վարկանիշավորման համակարգը (Higher Education Evaluation and Accreditation Council of Taiwan - <http://www.heeact.edu.tw>)
- «ԱՄՆ նորություններ» թերթի Կրթություն հավելվածը՝ Աշխարհի լավագույն համալսարանները (US News Education- World'sBest Universities <http://www.usnews.com/education/worlds-best-universities-rankings/top-400-universities-in-the-world>):

Վարկանիշավորման բազմաթիվ համակարգերի ստեղծումը և դրանց նկատմամբ հասարակական հետաքրքրության աճը բացատրվում է բարձրագույն կրթության զանգվածայնացման և հասանելիության բարձրացման գործոններով: Բուհերի վարկանիշավորման աշխարհում գործող համակարգերը կարելի է տարբերակել իրենց մեթոդաբանությամբ՝ նշելով հիմնական մոտեցումները.

1. ՁԼՄ-ների և անկախ հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակվող վարկանիշավորման համակարգեր՝ հիմնված բուհերի հեղինակության վրա;
2. Որակի ապահովման գործակալությունների կողմից իրականացվող վարկանիշավորումներ՝ ելնելով որակի ապահովման մեխանիզմներից;
3. Համալսարանների կողմից իրականացվող վարկանիշավորումներ՝ ելնելով բուհերի գիտահետազոտական և/կամ ուսումնական գործունեության արդյունքներից;
4. Պետական կառույցների կողմից իրականացվող վարկանիշավորումներ՝ ելնելով հաշվետվողականության մեխանիզմներից:

Բոլոր չորս մոտեցումներն էլ, այսպես թե այնպես, հանգեցնում են բարձրագույն կրթական հաստատությունների համադրմանը և համեմատությանը:

Բուհերի վարկանիշավորման ժամանակակից համակարգերը հասկանալու համար կարևոր է դիտարկել այն սկզբունքների շրջանակը, որն ուղենշային է համարվում այդ համակարգերի տեսանկյունից: Ներկայումս նման շրջանակի դերում հանդես են գալիս բարձրագույն կրթական հաստատությունների վարկանիշավորման բեռլինյան սկզբունքները: Նշյալ սկզբունքները մշակվել և ընդունվել են Միջազգային վարկանիշավորման փորձագիտական խմբի կողմից, որը ստեղծվել է Յունեսկոյի՝ Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոնի և Բարձրագույն կրթության քաղաքականության ինստիտուտի կողմից 2004 թվականին: Այս փորձագիտական խմբի երկրորդ հանդիպման ընթացքում, որը կայացել է 2006-ի մայիսին Բեռլինում, ներկայացվել են վերոնշյալ սկզբունքները: Դրանք հանդիպման վայրի անունով կոչվել են բեռլինյան: Բեռլինյան սկզբունքները ներառում են չորս բաժիններ:

1. Առաջին բաժինը վերաբերում է վարկանիշավորման նպատակներին: Ըստ այդմ, այս բաժնի հիմնական սկզբունքներն են.
 - Վարկանիշավորումն ընդամենը մի գործիք է բուհերում ուսումնական գործընթացի և վերջնարդյունքների գնահատման մոտեցումների բազմազանության մեջ:
 - Վարկանիշավորումը պետք է լինի միանշանակ իր նպատակի և թիրախային խմբի տեսանկյունից: Մեկ թիրախային խմբի համար ստեղծված վարկանշային համակարգը կարող է արդիական չլինել մեկ այլ խմբի համար:
 - Վարկանիշավորումը պետք է հիմնվի հաստատությունների բազմազանության, ինչպես նաև դրանց առաքելությունների և նպատակների տարբերության վրա (օրինակ, գիտահետազոտական ուղղվածություն ունեցող բուհերի վարկանիշի հաշվարկման ձևը

չի կարող համընկնել լայն զանգվածների համար հասանելիության ապահովմանն ուղղված հաստատության վարկանիշի չափման հետ):

- Վարկանիշավորումը պետք է հրապարակայնորեն և հստակ նշի իր տեղեկատվական աղբյուրները: Այս առումով կարևոր է հասկանալ, որ վարկանիշավորման արդյունքները մեծապես կախված են նրանից, թե ինչպիսի տեղեկատվական աղբյուրներ են կիրառվել և որ լսարանին է փոխանցվում այդ աղբյուրներից ստացված տվյալները:
- Կարևոր է վարկանիշավորման ենթակա հաստատությունների լեզվաբանական, մշակութային, տնտեսական և պատմական համատեքստերի սահմանումը:

2. Երկրորդ բաժինը վերաբերում է ցուցանիշների սահմանմանն ու կշռմանը: Այս բաժնի հիմնական սկզբունքներն են.

- Պետք է ընտրել հավաստի, համապատասխան և հուսալի ցուցանիշներ:
- Հնարավորության դեպքում պետք է օգտագործել ցուցանիշներ, որոնք չափում են արդյունքները համադրելով ներդրումների հետ:
- Պետք է սահմանափակել տարբեր ցուցանիշների կշիռների հաճախակի փոփոխությունները:
- Անհրաժեշտ է ապահովել կիրառված մեթոդաբանության թափանցիկությունը:

3. Երրորդ բաժինը տվյալների հավաքագրման և մշակման բաժինն է, որի հիմնական սկզբունքներն են.

- Պետք է օգտագործել հնարավորինս ստուգված և ճշգրտված տվյալներ ու տեղեկատվություն:
- Անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել տվյալների հավաքագրման էթիկական կողմին:
- Կարելի է օգտագործել միայն այն տվյալները, որոնք հավաքագրվել են տեղեկատվության հավաքագրման գիտական կանոնների համաձայն:
- Տվյալների հավաքագրման համար պետք է կիրառել հստակ կազմակերպչական մեխանիզմներ՝ վարկանիշավորման հուսալիության բարձրացման համար:

4. Չորրորդ բաժինը վերաբերում է վարկանիշավորման արդյունքների ներկայացմանը, որի հիմնական սկզբունքները հետևյալն են.

- Անհրաժեշտ է ապահովել վարկանիշավորման մշակման համար օգտագործված չափանիշների, կշիռների և այլ գործոնների մատչելիությունը սպառողների շրջանում՝ նրանց հնարավորություն ընձեռելով ինքնուրույն ընտրություն կատարել բուհերի

վարկանիշի ձևավորման հարցում (սա նշանակում է, որ սպառողները պետք է հնարավորություն ունեն անձամբ որոշել ցուցանիշների կշիռները և ըստ իրենց համար կարևոր ցուցանիշի ընտրել լավագույն բուհը):

- Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել սկզբնական տվյալների ցանկացած անճշտություն և վարկանիշավորման արդյունքները հրատարակել այնպիսի ձևաչափով, որ հնարավոր լինի ուղղել նկատված սխալներն ու անճշտությունները:

Այս սկզբունքները հանդիսանում են որակյալ վարկանիշավորման համակարգի ուղենիշ և բնութագրիչներ: Սակայն գործող միջազգային և ազգային վարկանիշավորման համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բեռլինյան սկզբունքներին հետևելը մնում է մարտահրավեր վարկանիշավորման դաշտում:

Մասնավորապես, այս ուղղությամբ կան մի քանի հայտնի ուսումնասիրություններ, ինչպես Ուշերի և Սավինոյի 2006 թվականի ուսումնասիրությունը, Դիլլի և Սուի 2005 թվականի ուսումնասիրությունը, Վան Դեյկի 2005 թվականի ուսումնասիրությունը և Հենդելի և Ստոլցի ուսումնասիրությունը 2008 թվականին, որոնք ուղղված են արդի վարկանիշավորման համակարգերի համեմատական վերլուծությանը: Այս ուսումնասիրությունների հիմնական ընդհանրական եզրակացությունն այն է, որ գործող վարկանիշային սխեմաներում ընդհանրություններ գրեթե չկան: Ինչպես նշում են Ուշերն ու Սավինոն, ուսումնասիրված 18 միջազգային վարկանիշավորման համակարգերում նրանք չեն գտել նույնությամբ կրկնվող նույնիսկ մեկ ցուցանիշ: Սակայն այլ հեղինակներ քննադատության են ենթարկում հենց Ուշերի ու Սավինոյի իրականացրած հետազոտությունը, գտնելով, որ ուսումնասիրված վարկանիշավորման համակարգերի ընտրությունը գիտականորեն հիմնավորված չէ: Օրինակ, եվրոպական 23 համակարգերից ընտրվել են միայն 9-ը և պարզ չէ, թե ինչ սկզբունքով: Ակնհայտ է, որ ընտրանքի սխալը կարող էր մեծապես ազդել ուսումնասիրության արդյունքների վրա: Նույնքան ակնհայտ է, որ վարկանիշավորման համակարգերը, այնուամենայնիվ, ավելի շուտ և ավելի շատ տարբեր են, քան միմյանց նման: Նմանությունների արձանագրման մեջ առավել հաջողակ են գտնվել հենց Դիլլն ու Սուն: Նրանց ուսումնասիրությունը ևս ընտրանքի ներկայացուցչականության առումով թերի է, քանի որ ընդգրկում է ընդամենը վեց վարկանիշավորման համակարգերի վերլուծություն: Հենդելն ու Ստոլցն առավել ընդգրկուն հետազոտություն են արել՝ ներառելով 29 եվրոպական համակարգերից 23-ը: Նրանց կողմից իրապես նկարագրվել է համակարգերի տարբերությունները մի շարք հարցերում: Այսպես, ակնհայտ է, որ վարկանիշավորման համակարգերի մեծ մասի ստեղծողները ՋԼՄ-ներն են, Սլովակիայում և Իսպանիայում այդ համակարգերը մշակվել և

գործարկում են գիտահետազոտական ինստիտուտների կողմից, իսկ Շվեդիայի դեպքում այն իրականացվում է պետական կառույցի կողմից:

2.4. Բուհերի վարկանիշավորման և աստիճանակարգման փորձը հետսոցիալիստական երկրներում

Այս բաժնում դիտարկվում է բուհերի վարկանիշավորման փորձը Ղազախստանում, Ուկրաինայում, Ալբանիայում, Բուլղարիայում:

Ղազախստանի բուհական համակարգի վարկանիշավորման հիմնական նպատակն է դիմորդներին և նրանց ծնողներին տեղեկացված որոշում կայացնելու հնարավորություն ընձեռել: Այստեղ վարկանիշավորման առաջին փորձերը ձեռնարկվել են 2006 թվականին, Ազգային հավատարմագրման ծառայության կողմից, որը գործում է Կրթության և գիտության նախարարության ենթակայության ներքո: 2008 թվականին Որակի ապահովման Ղազախստան գործակալությունը իրականացրել է Ղազախստանի բուհերի առաջին անկախ համարվող վարկանիշավորումը: 2008 թվականից հետո այն իրականացվում է յուրաքանչյուր տարի: Ղազախստանի վարկանիշավորման մեթոդաբանությունը հիմնված է երեք հիմնական բաղադրիչների վրա՝ բուհերի գիտական և ակադեմիական գործունեության գնահատական /60%/, կրթության ոլորտի փորձագետների հարցում /20%/ և գործատուների հարցում /20%/: Այսպիսով, փորձ է արված համադրել օբյեկտիվ և սուբյեկտիվ չափումները: Առաջին բաղադրիչի համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է հաստատություններից: Հաստատությունները տեղեկատվությունը տրամադրում են էլեկտրոնային և թղթային տեսքով, ինչը ուղեկցվում է հիմնավորող փաստաթղթերով՝ բարձրացնելով տվյալների հավաստիությունը: Տեղեկատվության հավաքագրումը տևում է 2-5 ամիս: Այնուհետև այն ենթարկվում է վերլուծության: Տվյալների ճշգրտման համար օգտագործվում են համալսարանների ինտերնետային կայքէջերը, ներգրավվում է նաև երրորդ կողմ: Վարկանիշավորման սկզբնական գործարկումից հետո որոշ ցուցանիշներ փոփոխության են ենթարկվել կամ ընդհանրապես հանվել են ցանկից՝ հաշվի առնելով տեղեկատվության հասանելիությունը և հավաստիությունը: Ներկայումս այս ուղղությամբ չափման համար կիրառվում է 6 չափանիշ և 36 ցուցիչ: Չափանիշները հետևյալն են՝ ուսանողների որակական կազմը, ուսանողների ընդունելության արդյունքներն ու ուսանողների կրթական առաջադիմությունը, ֆակուլտետների որակական կազմը, բուհի հետազոտական և նորարարական ներուժը, միջազգային համագործակցության մակարդակը, բուհի տեղեկատվական ռեսուրսների մակարդակը:

Վարկանիշավորման երկրորդ և երրորդ բաղադրիչները կախված չեն բուհերից ստացված տեղեկատվությունից: Դրանք հիմնված են հարցումների միջոցով ստացվող տվյալների վրա: Երկրորդ բաղադրիչը հիմնված է փորձագիտական գնահատականների միջոցով ստացվող տեղեկատվության վրա: Փորձագետներն ընտրվում են ըստ իրենց որակավորման և փորձի՝ հատուկ սահմանված որակավորման պահանջներին համապատասխան: Փորձագետները հինգ միավորանոց սանդղակով գնահատում են բուհերը: Վարկանիշավորման առաջին տարիներին իրականացվում էր ուսանողների և դասախոսների հարցում, սակայն հետագայում այն դիտվեց որպես չափազանց ծախսատար և ոչ հավաստի տեղեկատվություն հաղորդող մեթոդ:

Երրորդ բաղադրիչը հիմնված է գործատուների գնահատականների վրա: Գործատուները գնահատում են իրենց աշխատողների հմտություններն ու կարողությունները՝ հաշվի առնելով նրանց ավարտած բուհերը: Օգտագործվում է նույն հարցաշարը, ինչ որ փորձագետների համար: Ելնելով ստացված տվյալների համադրումից՝ կառուցվում է բուհերի վարկանիշը: Բուհերը տարաբաժանվում են հետևյալ խմբերի՝ տեխնիկական, հումանիտար, տնտեսական, մանկավարժական, բժշկական և այլն: Վարկանիշավորման համակարգերը կայքէջի միջոցով հասանելի են բոլորին:

Ուկրաինայում վարկանիշավորման համակարգը իրականացվում է հինգ մասնագիտական ոլորտներում՝ բիզնես/տնտեսագիտություն, իրավաբանություն, ինժեներիա/տեխնոլոգիա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ճարտարապետություն: Ուկրաինական վարկանիշավորման համակարգի հիմնական նպատակն է վարկանիշավորման միջոցով Ուկրաինայում բարձրագույն կրթական համակարգի նկատմամբ հանրային վերահսկողության բաց գործիքի ստեղծումը: Ուկրաինական համակարգը նպատակ ունի նաև գնահատել բուհերի և գործատուների միջև համագործակցության աստիճանը, բուհերի կողմից աշխատաշուկայի իրական կարիքներին համապատասխան կրթության ապահովումը, ինչպես նաև շրջանավարտների համար աշխատաշուկայում կայուն հեռանկարների ստեղծումը: Այս համակարգի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը կատարվում է հետևյալ եղանակներով.

- Օգտագործվում են մի շարք սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներ, որոնք ուղղված են գործատուների, շրջանավարտների, բարձր կուրսերի ուսանողների շրջանում կրթական ծառայություններից բավարարվածության բացահայտմանը, ինչպես նաև ներառում են փորձագիտական գնահատականներ;
- Վերլուծվում է բուհական համակարգի գործառնության տարբեր կողմերին վերաբերող վիճակագրություն:

Ուկրաինական վարկանիշավորման համակարգը հիմնված է չորս հիմնական չափանիշների վրա: Բարձր վարկանիշ է ունենում այն բուհը, որը ընտրվում է գործատուների կողմից որպես տվյալ մասնագիտական ոլորտի լավագույն բուհ, ստանում է ուսանողների կողմից բավարարվածության բարձր գնահատական, ինչպես նաև շրջանավարտների կողմից բնութագրվում է որպես աշխատանքային լավ հեռանկարներ ապահովող հաստատություն՝ ներառյալ գործատուների հետ սերտ համագործակցությունը: Առաջին երեք չափանիշների համար տեղեկատվությունը ստացվում է սոցիոլոգիական հարցումների միջոցով, վերջին չափանիշով տեղեկատվությունը՝ վիճակագրական տվյալներից: Այս չափանիշներից յուրաքանչյուրի կշիռը որոշվում է փորձագիտական գնահատականների արդյունքում:

Բուլղարիայի վարկանիշավորման համակարգը բաղկացած է երկու մասից՝ «ստանդարտացված» վարկանիշավորում և «ճկուն» վարկանիշավորում: Ստանդարտացված վարկանիշավորումն իրենից ներկայացնում է բուհերի վարկանիշներ՝ նախապես սահմանված ցուցանիշների օգտագործմամբ: Ճկուն վարկանիշավորումը հնարավոր է դարձնում յուրաքանչյուր սպառողի կողմից իր կողմից նախընտրելի ցուցանիշների ընտրության և համադրության միջոցով իր վարկանիշների կառուցումը: Ըստ այդմ, հնարավոր է ճկուն ընտրություն կատարել տրված 49 ցուցանիշներից՝ ընտրելով առնվազն մեկը: Տեղեկատվական աղբյուրներն ընդգրկում են բուհական վիճակագրությունը և ուսանողների կարծիքի ուսումնասիրության արդյունքները: Հիմնական տեղեկատվական աղբյուրները վեցն են: Բուլղարիայի վարկանիշավորման համակարգը ներառում է 67 ցուցանիշ, որոնցից 49-ը անմիջականորեն օգտագործվում են վարկանիշավորման համար: Դրանք իրենց հերթին տարբերակված են վեց թեմատիկ խմբերի միջև: Մյուս ցուցանիշները տեղեկատվական բնույթի են, օրինակ՝ տվյալ մասնագիտությամբ ուսանողների թիվը և այլն, բայց դրանք անմիջականորեն չեն օգտագործվում վարկանիշի ձևավորման համար: Ցուցանիշների կշիռների որոշումը կատարվում է փորձագիտական խմբի կողմից՝ խորհրդակցելով բուհերի հետ: Կշիռը անմիջականորեն կապված է ցուցանիշի կարևորության հետ: Ըստ այդմ առավել կարևոր ցուցանիշը ավելի մեծ կշիռ է ստանում, նույնիսկ եթե տեղեկատվության հուսալիությունը ավելի բարձր է նվազ կարևոր ցուցանիշի համար: Վեց թեմատիկ խմբի ցուցանիշների կշիռները հետևյալն են. ուսուցում և ուսումնասիրություն՝ 25%, գիտություն և հետազոտություն՝ 20%, ուսուցողական միջավայր՝ 5%, սոցիալական արդարություն և աղմինիստրատիվ ծառայություններ՝ 5%, հեղինակություն՝ 10%ս, կարիերայի հնարավորություններ և համապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին՝ 35%: Այս

կշիռները կիրառվում են բոլոր մասնագիտական ոլորտների համար: Տարբերակված մոտեցում է կիրառվում միայն արվեստի բուհերի դեպքում: Մասնավորապես, այստեղ գիտություն և հետազոտություն բաժինը փոխարինված է ստեղծագործական բաժնով: Բուհերի վերջնական վարկանիշները ներկայացվում են 0-100 միավորանոց համակարգով:

Ալբանիայի վարկանիշավորման համակարգը մշակվել է 2010 թվականին Գերմանիայի Բարձրագույն կրթության կենտրոնի կողմից: Վարկանիշավորումը իրականացվում է Որակի ապահովման ազգային գործակալության կողմից, որում գործում է հատուկ այդ նպատակով ստեղծված բաժին: Վարկանիշավորման համակարգի հիմնական նպատակը ուսանողներին տեղեկատվություն տրամադրելն է: Այս համակարգի միջոցով իրականացնում է ոչ թե հաստատության ամբողջական վարկանիշի, այլ մասնագիտական ոլորտների վարկանիշների որոշում: Այն բազմաչափ է, այսինքն ներառում է մի շարք ցուցանիշներ: Այն նաև հեռանկարային է այն առումով, որ հիմնվում է ինչպես բազմաբնույթ տեղեկատվական աղբյուրների, այնպես էլ խմբային մոտեցման վրա: Այսինքն, յուրաքանչյուր հաստատության առանձին վարկանիշային միավոր չի տրվում և բոլոր հաստատությունները բաժանվում են երեք խմբերի միջև՝ ըստ վարկանիշների՝ ցածր, միջին և բարձր: Համակարգում ընդգրկված են հետևյալ մասնագիտական ոլորտները. իրավունք, բիզնես/տնտեսագիտություն, հասարակական գիտություններ, առողջապահություն: Վարկանիշավորման ուղղությունները հետևյալն են.

- Ուսանողի բնութագիրը
- Ուսումնառության արդյունքները
- Միջազգային կողմնորոշումը
- Գիտական հետազոտությունը
- Ուսուցումն ու ուսումնառությունը
- Հաստատության տեխնիկական հնարավորությունները
- Աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելիությունը
- Ուսանողների և դասախոսների կողմից բուհին տրված ընդհանուր գնահատականը
- Բուհի տեղակայման և այլ հարցերին քաղաքի կողմից տրված գնահատականը

Ալբանիայի վարկանիշավորման համակարգը տրամադրում է երկու տիպի տեղեկատվություն: Առաջինը ցուցանիշային է, որը որոշակի կոնկրետ ուղղությամբ թվային տեղեկատվություն է հաղորդում, և նկարագրական, որը կարող է լինել տեքստային կամ թվային: Տեղեկատվությունը ստացվում է ուսանողների և դասախոսների հարցման, ինչպես նաև հաստատություններից ստացվող վիճակագրական տվյալների հիման վրա:

Գլուխ 3. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների դասակարգումը և վարկանիշավորման ցուցանիշները

Ինչպես արդեն նշվել է Գլուխ 1-ում, Հայաստանում նախքան բուհերի վարկանիշավորում իրականացնելն անհրաժեշտ է կատարել բուհերի դասակարգում (խնբավորում) որոշակի հստակ չափանիշներով: Մասնավորապես, Հայաստանյան բուհերի խնբավորումը իրականացվել է երկու հիմնական չափանիշների հիման վրա: Դրանք են.

1. Բուհում առկա կրթական ծրագրերը՝ բակալավրի, մագիստրոսի, հետբուհական;
2. Բուհում առկա մասնագիտական ոլորտների թիվը՝ մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթություն իրականացնող բուհեր և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթություն իրականացնող բուհեր:

Ըստ վերոնշյալ չափանիշների բուհերի խնբավորման արդյունքում Հայաստանյան բուհերի դասակարգումը տրված է ստորև բերված Աղյուսակում 1-ում:

Աղյուսակ 1. ՀՀ բուհերի դասակարգումը

N	Առանձնացված բուհերի խմբեր	Բուհերի թիվը տվյալ խմբում	Վարկանիշավորման ցուցանիշների կիրառումը
1.	Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր	9	Վարկանիշավորումը կատարվում է բոլոր ցուցանիշներով
2	Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր	12	Վարկանիշավորումը կատարվում է բոլոր ցուցանիշներով
3	Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր	2	Վարկանիշավորումը կատարվում է և բոլոր բուհերի համար կիրառվող ընդհանուր ցուցանիշներով, և մագիստրոսական ու բակալավրական կրթական ծրագրեր իրականացնող բուհերին վերաբերող ցուցանիշների

			մասով
4	Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր	12	Վարկանիշավորումը կատարվում է և բոլոր բուհերի համար կիրառվող ընդհանուր ցուցանիշներով, և մագիստրոսական ու բակալավրական կրթական ծրագրեր իրականացնող բուհերին վերաբերող ցուցանիշների մասով
5	Միայն հետբուհական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր	61	Վարկանիշավորումը կատարվում է և բոլոր բուհերի համար կիրառվող ընդհանուր ցուցանիշներով, և հետբուհական ծրագրեր իրականացնող բուհերին վերաբերող ցուցանիշներով
6	Միայն մագիստրոսական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր	9	Վարկանիշավորումը կատարվում է և բոլոր բուհերի համար կիրառվող ընդհանուր ցուցանիշներով, և մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող բուհերին վերաբերող ցուցանիշների մասով
7	Միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր	22	Վարկանիշավորման ենթակա է և բոլոր բուհերի համար ընդհանուր ցուցանիշների մասով, և բակալավրական կրթական ծրագրեր իրականացնող բուհերին վերաբերող ցուցանիշների մասով
8	Արվեստի բուհեր	11	Վարկանիշավորման ենթակա է և բոլոր բուհերի համար ընդհանուր ցուցանիշների մասով
9	Մագիստրոսական ու հետբուհական կրթական ծրագրեր	1	Վարկանիշավորման ենթակա է և բոլոր բուհերի համար ընդհանուր

իրականացնող բուհեր		ցուցանիշների մասով և մագիստրոսական ու հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող բուհերին վերաբերող ցուցանիշների մասով
--------------------	--	---

Այսպիսով, բուհերի վարկանիշը գնահատելու համար առանձնացվել են 9 խմբերում միավորված ցուցանիշներ: Ցուցանիշների յուրաքանչյուր խումբ բնութագրում է բուհի գործունեության որոշակի ոլորտ, որը կիրառելի է բոլոր բուհերի համար, այն դեպքում, երբ յուրաքանչյուր խմբում ընդգրկված ցուցանիշների կիրառելիությունը ըստ բուհերի տարբերվում է:

Քանի որ տարբեր բուհերի ցուցանիշների բացարձակ արժեքները կարող են պայմանավորված լինել տարբեր՝ վարկանիշավորման համար ոչ էական գործոններով, դրանց համադրությունը չի կարող, ըստ էության, օբյեկտիվորեն արտահայտել բուհերի՝ գործունեության տարբերությունները: Ուստի, անհրաժեշտ է ցուցանիշների բացարձակ արժեքներից անցում կատարել միասնական ստանդարտացված սանդղակի, որը հնարավորություն է տալիս համադրել ինչպես տարբեր խմբերում ընդգրկված բուհերի, այնպես էլ նույն բուհի տարբեր տարիների գնահատականները:

Անցումը բացարձակ արժեքից ստանդարտ սանդղակի իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$z = \sigma \frac{x_i + M}{S} + \mu, \text{ որտեղ}$$

z -ը ստանդարտացված գնահատականն է,

x_i -ն՝ բացարձակ գնահատականը,

M -ը և S -ը՝ բացարձակ գնահատականների միջին արժեքը և ստանդարտ շեղումը,

μ -ն և σ -ն՝ ստանդարտ սանդղակի միջին արժեքը և ստանդարտ շեղումը:

Կախված կիրառության նպատակներից՝ գործնականում կիրառվում են տարբեր ստանդարտ սանդղակներ, որոնք տարբերվում են միայն միջին արժեքի և ստանդարտ շեղման արժեքներով, սակայն դրանք բոլորն էլ համադրելի են: Ելնելով բուհերի վարկանիշավորման

նպատակներից՝ առաջարկվում է կիրառել «ստանդարտ 9-յակ» (stanine) սանդղակը, որի միջին արժեքը 5 է, ստանդարտ շեղումը՝ 2:

Տվյալների ստանդարտացման միակ էական պահանջն այն է, որ գնահատվող խմբում տվյալ ցուցանիշը պետք է ունենա նորմալ բաշխվածություն: Հաշվի առնելով, որ բուհերի դասակարգումը իրականացվել է այնպես, որ յուրաքանչյուր խմբում ընդգրկված բուհերի բազմությունը բավականին համասեռ է՝ ըստ ընտրված չափանիշների, կարելի է ենթադրել, որ նրանց ցուցանիշները կունենան նորմալ բաշխվածություն: Հակառակ դեպքում, կիրառելով հայտնի ձևափոխություններ, ստացված արդյունքները կարելի է բերել նորմալ բաշխման:

Անցնելով ստանդարտ սանդղակի՝ ցուցանիշների յուրաքանչյուր խմբի համար կարելի է հաշվարկել ընդհանրացված գնահատական՝ որպես բուհի գործունեության այդ ոլորտի ինտեգրալ ցուցանիշ: Ընդունելով, որ յուրաքանչյուր ցուցանիշ ունի համարժեք ներդրում ընդհանուր գնահատականում, որպես այդպիսին, կարելի է վերցնել տվյալ խմբում ընդգրկված ցուցանիշների ստանդարտ արժեքների միջին թվաբանականը, որը կրկին արտահայտված կլինի նույն ստանդարտ սանդղակում, որտեղ

- Z_i-ն i-րդ ոլորտի ընդհանրացված գնահատականն է,
- z_i-ն՝ i-րդ ցուցանիշի ստանդարտացված արժեքը,
- n-ը՝ տվյալ խմբում ընդգրկված ցուցանիշների թիվը:

Նման մոտեցումը հնարավորություն կտա համադրելի գնահատական ունենալ՝ անկախ յուրաքանչյուր կլաստերում ընդգրկված բուհերի ցուցանիշների կազմից: Այսինքն, եթե որևէ ցուցանիշ կիրառելի չէ բուհերի այս կամ այն խմբի համար, ապա դրա բացակայությունը էական ազդեցություն չի ունենա միջինացված գնահատականի վրա:

Այսպիսով, բուհի գումարային վարկանիշը կարող է հաշվարկվել հետևյալ բանաձևով.

$$R = \sigma_1 Z_1 + \sigma_2 Z_2 + \sigma_3 Z_3 + \sigma_4 Z_4 + \sigma_5 Z_5 + \sigma_6 Z_6 + \sigma_7 Z_7 + \sigma_8 Z_8 + \sigma_9 Z_9,$$

որտեղ՝

R-ը՝ բուհի ընդհանուր վարկանիշային միավորն է,

Z_i-ն՝ բուհի գործունեության i-րդ ոլորտի գնահատականն է՝ արտահայտված ստանդարտացված միավորներով,

σ_i-ն՝ i-րդ ոլորտի կշիռն է, այնպես, որ $\sum \sigma_i = 1$: Սրանց թվային արժեքները կորոշվի նախապես՝ փորձագիտական գնահատման միջոցով:

Վարկանիշավորման որոշ ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ հարցումները անցկացվելու են քանակական մեթոդաբանությամբ: Ըստ այդմ, մշակվելու են հարցաթերթեր, որոնք ներառելու են սանդղակավորված փակ հարցեր: Հարցման արդյունքներով ստացված տեղեկատվությունը կրելու է քանակական բնույթ: Ստացված տվյալները հիմք են ծառայելու այդ ցուցանիշների հաշվարկի համար:

Վարկանիշավորման որոշ ցուցանիշների հաշվարկման համար տեղեկատվության ստացման նպատակով նախատեսված հարցումները կազմակերպվելու են՝ ապահովելով պատահական ընտրանքի բոլոր կանոնները: Հարցումների արդյունքների օբյեկտիվությունը ապահովվելու է ներկայացուցչականության գիտական պահանջների պահպանման միջոցով:

Բացի դրանից, կարևոր է հաշվի առնել, որ յուրաքանչյուր ցուցանիշները ընդամենը որոշակի միավոր է վարկանիշավորման ցուցանիշների ընդհանուր համախմբի մեջ և առանձին վերցրած չի կարող և կոչված չի բուհերի վարկանիշը որոշելու: Բուհերի վարկանիշը կազմվելու է տարբեր ցուցանիշների համադրման միջոցով, ինչի արդյունքում հնարավոր է լինելու ապահովել տարբեր գործոնների համակշռումը և խուսափել բուհերի միակողմանի գնահատականներից:

Պետք է նշել, որ ՀՀ-ում գործում են նաև դիպլոմավորված մասնագետի կրթություն իրականացնող բուհեր, որոնք հիմնականում ԱՊՀ-ի պետական կամ մասնավոր բուհերի Հայաստանյան մասնաճյուղեր են: Բուհերի այս խումբը չի ընդգրկվի վարկանիշավորման գործընթացում, քանի որ վարկանիշավորման իրականացման համար անհրաժեշտ է բուհի կողմից Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ընդունված կրթական աստիճանների առկայությունը՝ այլ բուհերի հետ վերջիններիս համադրելիության ապահովման համար:

Արվեստի բուհերը դասակարգվել են առանձին խմբում՝ դրանց մասնագիտական և այլ առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակով:

Բուհերի վարկանիշավորման ընթացքում լրացուցիչ չափանիշներ են բուհի մասնագիտական ուղղվածությունը, չափը, տեղակայվածությունը և պետական-ոչ պետական լինելու հանգամանքը, որոնք խմբավորման համար հիմք չեն ծառայում, սակայն հաշվի են առնվում համադրման ժամանակ՝ հատուկ ցուցանիշներով, որպես լրացուցիչ գործոն:

Դասակարգման արդյունքում բուհերի մանրամասն ցանկն ըստ վերոնշյալ խմբերի տրված է Հավելված 1-ում:

Բուհերի վարկանիշավորման նպատակով մշակվել է ցուցանիշների շարք՝ ըստ հետևյալ ուղղությունների.

1. Ուսանողներ
2. Ուսումնառության արդյունքներ
3. Միջազգային ուղղվածություն
4. Գիտահետազոտական աշխատանքներ
5. Դասավանդման գործընթաց
6. Հաստատության կարողություններ
7. Աշխատանքային շուկա
8. Ընդհանուր գնահատումներ (ուսանողներ, դասախոսներ)
9. Համալսարանական շինություններ /«կամպուս»/

Ըստ յուրաքանչյուր ուղղության մշակվել են որոշակի ցուցանիշներ: Ցուցանիշներից յուրաքանչյուրի համար տրվում է հաշվարկի մեխանիզմը, ցուցանիշի գնահատման միավորային համակարգը, ցուցանիշի կիրառելիությունը բուհերի տարբեր խմբերի նկատմամբ, ցուցանիշի հաշվարկի համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման աղբյուրները:

Ինչպես նշվել է Գլուխ 1-ում, Հայաստանյան ազգային վարկանիշավորման համակարգում, ելնելով համադրելիության ապահովման խնդիրներից, բուհերի աստիճանակարգում կամ համեմատություն իրականացվելու է միայն դասակարգման տվյալ խմբի ներսում ներառված բուհերի շրջանում: Միևնույն ժամանակ, ՀՀ բուհական համակարգի ամբողջական պատկերը ստանալու համար սահմանափակ թվով ցուցանիշներ, որոնք վերաբերում են բուհի ընդհանուր ինստիտուցիոնալ բնութագրիչներին, կարող են կիրառվել բոլոր բուհերի համադրելի վարկանիշավորման նպատակով:

Առաջարկվող վարկանիշավորման համակարգը ներկայացվելու է առանձին ինտերնետային կայքում, որտեղ շահառուները հնարավորություն են ստանալու կատարել իրենց համար նախընտրելի ցուցանիշների ընտրություն և ստանալ բուհերի վարկանիշավորման սանդղակը իրենց համար կարևոր ցուցանիշով:

Վարկանիշավորման համակարգի ցուցանիշները, դրանց կշիռները և հաշվարկի միավորային համակարգը վերջնական տեսքի կբերվեն վարկանիշավորման առաջարկվող մոդելի մանրամասն փորձարկման արդյունքում՝ ապահովելով բուհերի և այլ շահառուների հետ հետադարձ կապը:

Վարկանիշավորման ազգային համակարգում ընդգրկված ցուցանիշների հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հիմնական խմբերը և դրանց ստացման աղբյուրները հետևյալն են.

1. Բուհերից ստացվող վիճակագրական տվյալներ, այդ թվում նաև՝ Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգին փոխանցված տեղեկատվություն,
2. Բարձրագույն կրթության ոլորտում գործող այլ կառույցներից ստացվող տեղեկատվություն,
3. Գործատուներից ստացվող տեղեկատվություն՝ հարցման միջոցով,
4. Ուսանողներից ստացվող տեղեկատվություն՝ հարցման միջոցով,
5. Շրջանավարտներից ստացվող տեղեկատվություն՝ հարցման միջոցով,
6. Դասախոսներից ստացվող տեղեկատվություն՝ հարցման միջոցով:

Վարկանիշավորման համակարգի իրականացման մեխանիզմը կհստակեցվի վարկանիշավորման փորձարկումից հետո՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից: Մասնավորապես, կհստակեցվեն վարկանիշավորումն իրականացնող կազմակերպչական կառույցի, իրականացման ժամկետների, պարբերականության և իրականացման հետ առնչվող այլ խնդիրներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում /Զեկույց/ <http://www.edu.am/index.php?id=-5215&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0>
2. ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկ, <http://www.edu.am/index.php?id=261&topMenu=-1&menu1=93&menu2=145&arch=0>

3. ՀՀ-ում գործող լիցենզավորված և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկ /2012 թ. հունիսի 22-ի դրությամբ/ <http://www.edu.am/index.php?menu1=93&menu2=145&arch=0>
4. ՀՀ-ում գործող արտերկրի պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ցանկ, <http://www.edu.am/index.php?menu1=93&menu2=145&arch=0>
5. Berlin Principles on Ranking of Higher Education Institutions, http://www.che.de/downloads/Berlin_Principles_IREG_534.pdf
6. Bulgarian University Ranking System 2012 Methodology, OSI-MBMD-S Consortium, <http://rsvu.mon.bg/>
7. College and University Ranking Systems: Global Perspectives and American Challenges, <http://www.ihep.org/assets/files/publications/a-f/CollegeRankingSystems.pdf>
8. College Rankings Reformed: The Case for a New Order in Higher Education, <http://www.colby.edu/ir/assessment/CollegeRankingsReformed.pdf>
9. Design and Testing the Feasibility of a Multidimensional Global University Ranking, http://ec.europa.eu/education/higher-education/doc/multirank_en.pdf
10. Development of a Ranking in Albania Final Report, http://www.ireg-observatory.org/pdf/ranking_albania_final_report_1307.pdf
11. Gladwell, Malcolm, The order of things: what collage rankings really tell us, <http://www.cuclasses.com/stat1001/lectures/classnotes/TheOrderofThings.pdf>
12. Global university rankings and their impact, http://www.eua.be/pubs/global_university_rankings_and_their_impact.pdf
13. Higher Education Rankings: Robustness Issues and Critical Assessment, http://publications.jrc.ec.europa.eu/repository/bitstream/111111111/12694/1/eur23487_saisana_dhommbres.pdf
14. Impact of College Rankings on Institutional Decision Making: Four Country Case Studies, <http://www.ihep.org/assets/files/publications/g-l/impactofcollegerankings.pdf>
15. League Tables as Policy Instruments: Uses and Misuses, http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oecd/education/league-tables-as-policy-instruments_hemp-v19-art10-en
16. Rating Methodology for higher education institutions of Ukraine, <http://eurosvita.net/index.php/?category=1&id=1936>

17. Salmi, Jamil, If Ranking is the Disease, Is Benchmarking the Cure?
http://www.unesco.org/pv_obj_cache/pv_obj_id_6F5397FECED78FBA156FA860184A274873C21A00/filename/J.Salmi.pdf
18. Statement on the development of rankings and classification in the EHEA, <http://www.esu-online.org/news/article/6065/112/>
19. The Ranking Methodology of Higher Education Institutions of Kazakhstan,
http://iqaa.kz/rankings/university_ranking_of_kazakhstan_in_2011/methodology_of_ranking_2011/
20. The 2009 Rating of Malasian Universities and University Colleges,
http://www.mqa.gov.my/portal2012/red/en/ratings_setara09.cfm